

16) Սահմակ Պարքեւ, մի պատկերով, կազմեց Ե. Թ., Հրատարակութիւն
Ե. Արամեանցի, 24 եր. գինը 5 կոտէկ, Վետերուրդ, 1902:

«Մուրճի» անցեալ համարներից մէկում մինք խօսեցինք պ.
Ե. Թ.-ի կազմած Մեսրոպ Մաշտոցի կենսագրութեան մասին:
Սահմակ Պարթեի անունը կապուած է Մեսրոպի հետ. դրանք մի և
նոյն մտքի, մի և նոյն գաղափարի ներկայացուցիչներն են, եր-
կու լծակիցներ մտաւոր յեղափոխութեան այն ահազին գործում,
որ սկսուեց Հայաստանում հինգերորդ դարի սկզբից: Ուստի
այն պակասութիւնները, որ մենք նկատել ենք Մեսրոպի կեն-
սագրութեան մէջ, նկատելի են և այստեղ, Սահմակ Պարթեւի
կենսագրութեան մէջ: Կազմողը տուել է Գրիգոր Լուսաւորչի
հոգեոր զինասաժիայի այս վերջին ներկայացուցչի կենսագրա-
կան փաստերը: Բայց մենք կը կամենայինք, որ Սահմակ-Մես-
րոպեան դպրոցի նշանակութիւնը աւելի լաւ պարզաբանուած
լինէր: Կենսագրութիւնից մենք իմանում ենք որ Սահմակ Պար-
թեւը գրական, գործիչ էլ է եղել, բայց սա քիչ է, զրական գոր-
ծիչներ շատ կան, բայց Սահմակ Պարթեւը բոլորովին ուրիշ
բան է: Եթէ նրա հոգեոր զրուածքները մենք համեմատենք
Ներսէս Շնորհալու զրուածքների հետ, կը տեսնենք որ վերջինս
բարձր է առաջինից թէ իր տուածի քանակութեան և թէ իր
տաղանդի կողմից: Բայց ինչու Սահմակ Պարթեւը Շնորհալուց
անհամեմատ բարձր է կանգնած:—Որովհետեւ նա ուզբնաւորու-
թիւն է, դպրոցի հիմնադիր է, ապդի կեանքի մէջ մնա յեղափո-
թիւն կատարող է: Այս հանգամանքները չը կան կենսագրու-
թեան մէջ:

Պէտք էր սպասել որ Սահմակի կենսագրութեան մէջ յիշ-
ուած կը լինէին մեր առաջին թարգմանիչները, յունական կըր-
թութեան մուտքը Հայաստան, այդ կրթութեան առաջացրած
քաղաքական և կուլտուրական հետեւանքները: Տարաբախտարար
սրանց մասին էլ ոչինչ չը կայ կենսագրութեան մէջ: Մենք, սա-
կայն, դժուարանում ենք մեղազրել պ. Ե. Թ.-ին. կենսագրու-
թիւնները չափազանց համառօտ են, գրքովների ծաւալը չա-
փազանց փոքրիկ է և այսպիսի կարեոր հանգամանքների վրայ
ուշադրութիւն դարձնել այդ փոքրիկ զրուածքներում անկարելի
է: Շատ լաւ կ'անէր հրատարակիչը, եթէ մի քիչ ընդարձակէր
գրքովների ծաւալը:

Մի ուրիշ հանգամանք էլ կայ, որի մասին աւելորդ չէր
լինի երկու խօսք ասել: Սահմակի կենսագրութիւնը կարդացողը
զարմացած է մնում մի բանի՝ վրայ. հայ նախարարները պար-

սից կառավարութեան միջոցով գահընկէց են անում իրանց թագաւորներին, Սահակ կաթողիկոսին, ապա ցոյց են տալիս ջանքեր, որոնցից մենք այն ենք հասկանում, որ նախարարները չեն ուզում որ բոլորովին ջնջուի թագաւորութիւնը, իսկ կաթողիկոսութիւնը գուրս գայ Գրիգոր Լուսաւորչի տօհմի ձեռքից: Այս քանդող և պահպանող ձգտումները անհասկանալի են մնում ընթերցողներին: հակասութիւններ են դրանք, որոնք զարմանալի են թւում մեզ և մենք ստիպուած ենք լինում ենթադրելու, որ նախարարները քմահաճութիւն ունեին մերթ այսպէս, մերթ այնպէս լինելու:

Մեղադրել այդ բանի համար պ. Ե. Թ.-ին չէ կարելի: Սկսած Զամշեանից ամենքն են այդպէս ներկայացնում մեզ այդ ժամանակների պատմութիւնը. կամեցան նախարարները, գահընկէց արին Սահակ Պարթեին. կամեցան նախարարները, և նուրից նրան կաթողիկոսական գահի վրայ դրին: Բայց քմահաճութիւններով չէ կառավարում քաղաքական կեանքը մի երկրի մէջ: Որքան էլ հայ նախարարական տօհմերը անմիաբան, ինքնազգութիւններ, նրանց էլ զեկավարում էին յայտնի օրէնքներ. դրանք այն ձգտումները, այն հոսանքներն էին, որոնք ժամանակի հարցեր էին: Պատմական կեանքը մեզ թողել է հակասական երեսյթներ, բայց մենք չենք կարողանում պարզաբանել այդ երեսյթները և միամտաբար քմահաճութիւններին ենք վերագրում այն խոշոր գէպքերը, որոնք այնքան ահազին դեր կատարեցին մեր անցեալում:

Մեր կարծիքով, այդ հակասութիւնները հասկանալու և պարզաբանելու համար հարկաւոր է լաւ վերլուծել և քննել Հայաստանի քաղաքական կեանքը քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ: Մենք կարծում ենք որ շատ հեշտ է գտնել Հայաստանում երկու ուժեղ կուսակցութիւններ, որոնք առաջ են գալիս քրիստոնէութիւնից յետոյ—պարսկասէր և յունասէր: Ամբողջ չորրորդ դարը այդ հզօր կուսակցութիւնների պաքարի ժամանակն է, մի պայքար, որ ծայրացեղ լարման հասաւ ներսէս Մեծի ժամանակ: Ներսէսը յունական ազգեցութեան կատարեալ յաղթանակը մացրեց Հայաստան և անհաշտութեան ծայրագոյն աստիճանին հասցրեց պարսկական ազգեցութեան կողմնակիցներին (Մեծրուժան): Երկար խօսել այդ մասին, չենք կարող միայն բաւական է մատնանիշ անել այդ հանգամանքը, որ շատ կարեոր է նախարարական տօհմերի բոնած դիրքը հասկանալու համար քմահաճութիւնների գործ չը կայ մէջտեղ, գործում է այն իւրողութիւնը, որ մերթ պարսկական կուսակցութիւնն էր ուժեղանում, մերթ յունականը Վերջինս կապուած էր Գրիգոր

Լուսաւորչի տոհմի հետ, իսկ այդ տոհմին, սեփական գինաստիայի տեսակէտից, ձեռնուու էր պահպանել Արշակունիների տոհմը թագաւորական զահի վրայ, Ներսէս Մեծի պատմութիւնը այս բանը հաստատում է առատ փաստերով: — Ներսէսի ժամանակ պարսկասէր կուսակցութիւնը Մեհրուժան առաջացրեց, իսկ երբ Սահակը վերջնականապէս հաստատեց Հայաստանում յունական ազգեցութիւնը կրթութեան միջոցով, նոյն պարսկական կուսակցութիւնը տապալեց Արշակունիների դահը և առաջ բերեց մի շարժում, որի գլուխն էր Վասակ Սիւնեցին:

L.

17) ՀԵՆՐԻՔՑԱ, ՎԻՏՈՅՑ, ԹԱՐԱՎԻ ԹԱՐԱՎԻ. օր. 7, 8-ն, ԹԻՖԼԻՍ, 1902 թ., զին է 12 կոպէկ:

Մեզանում լաւ մանկական գրքեր այնքան քիչ են, որ նըրանց մատով կարելի է համարել: Զուտ մանկական գրողներ համարեա չունենք, եղածներն էլ շատ քիչ բան են արտադրել: Այդ է պատճառը, որ մեր մանկական գրականութեան մէջ շատ-քիչ յայտնի գրքոյները թարգմանական են:

Մանուկի հասկացողութեան յարմար, հետաքրքրական ձեւով գրած և միաժամանակ լաւ բարոյական ազգեցութիւն թող-նող գրքոյներից մէկը մնաւուշտ լինելու է և «Թմիլիկը»: Այդ գրքոյնի հերոս՝ Փոքրիկ Օննիկի ալտորուխատական քայլը պատ-մուած է այնքան գրաւիչ և մանկական հասկացողութեան մատ-չելի ձեւով, որ անկասկած «Թմիլիկը» մանուկննրի սիրած գըր-քերից մէկն է դառնալու:

Գրքոյնը պատկերագրադ է. այդ էլ նրա գրաւիչ կող-մերից մէկն է: Գինը շատ մատչելի է: Ափսոս որ գրքի սրբա-գրութիւնը չափաղանց անփոյթ կերպով է կատարաւած: Մա-նուկների ընթերդանութեան համար յատկացրած գրքոյներում կարելի չէ թողնել այդքան սրբագրական միալներ: Լաւ կը լի-նէր մանկական գրքերը աւելի խոշոր տառերով տպագրել:

L. U.